Հայոց պատմություն

1 Ե՞րբ է Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունվել «Դպրոցի կառավարման մասին» օրենքը.

1) 1918 թ. սեպտեմբերին
2) 1919 թ. մայիսին
3) 1919 թ. հուլիսին
4) 1919 թ. սեպտեմբերին

2 Ե՞րբ է խեթական թագավորի և Հայասայի Խուկանա արքայի միջև կնքվել բարեկամության և փոխօգնության պայմանագիր.

1) Ք. ա. XIV դարում
2) Ք. ա. XV դարում
3) Ք. ա. XII դարում
4) Ք. ա. XIII դարում

3 Ո՞ր թվականին սկսվեց պարսկա-բյուզանդական 20-ամյա պատերազմը.

1) 582 թ.
2) 591 թ.
3) 571 թ.
4) 572 թ.

4 Ո՞ր թերթի խմբագիրն էր Հրանտ Դինքը.

1) «Ազդարար»
2) «Մարմարա»
3) «Ակոս»
4) «Լրո գիր»

5 Ե՞րբ է Մուշեղ սպարապետը զորքով շարժվել Գանձակ.

1) 368 թ.
2) 372 թ.
3) 379 թ.
4) 378 թ.

6 Ե՞րբ է սկսվել Բալկանյան երկրորդ պատերազմը.

1) 1913 թ. հունիսի 29-ին
2) 1912 թ. հունիսի 29-ին
3) 1912 թ. նոյեմբերի 29-ին
4) 1913 թ. նոյեմբերի 29-ին

7 Վարչական առումով Վանի պետությունը բաժանված էր.

1) ստրատեգիաների
2) սատրապությունների
3) նահանգների
4) մարզերի

8 Ո՞ր գետի ափին է կառուցվել Բագարան քաղաք-սրբավայրը.

1) Ախուրյան
2) Արածանի
3) Մեղրագետ
4) Մեծամոր

9 Որքա՞ն էր հայկական բանակի մարտական ուժը 1920 թ. թուրք–հայկական պատերազմի ժամանակ.

1) 25000
2) 40000
3) 20000
4) 15000

10 Ո՞վ էր հեթանոս հայերի ընտանիքի հովանավոր աստվածուհին.

1) Անահիտը
2) Նանեն
3) Արտեմիսը
4) Աստղիկը

11 Որտե՞ղ էր գտնվում Կիլիկիան.

1) Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում
2) Փոքր Ասիայի հարավ-արևելքում
3) Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում
4) Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում

12 Ո՞ր իրադարձության կապակցությամբ են ասվել հետևյալ խոսքերը. «Հայերը կռվում և մեռնում էին որպես հերոսներ, նրանց ղեկավարները, որ միշտ առջևի գծում էին, գրեթե բոլորն էլ վիրավոր էին»:
1) Բայազետի 1829 թ. պաշտպանության
2) Հալիձորի 1727 թ. պաշարման
3) Բայազետի 1877 թ. պաշտպանության
4) Շուշիի 1826 թ. պաշտպանության

13 Որտե՞ղ էր գտնվում Տիր աստծու մեհյանը.

1) Բագառիճում
2) Երիզա ավանում
3) Երազամույնում
4) Թիլ ավանում

14 Հայոց ո՞ր արքան էր մեջբերման մեջ հիշատակված արքայի եղբայրը. «Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:
1) Աշոտ III
2) Աբաս
3) Աշոտ II
4) Սմբատ II

15 Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը. «Ժխտել՝ նշանակում է սպանել զոհերին երկրորդ անգամ»:

1) Անդրեյ Սախարով
2) Առնոլդ Թոյնբի
3) Էլի Վիզել
4) Ֆրիտյոֆ Նանսեն

16 Ե՞րբ է Իսրայել Օրին ժամանել Ռուսաստան՝ Պետրոս I-ին հանդիպելու համար.

1) 1701 թ.
2) 1700 թ.
3) 1702 թ.
4) 1699 թ.

17 Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը. «Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:
1) Յակով Զարոբյանը
2) Ասքանազ Մռավյանը
3) Գրիգոր Հարությունյանը
4) Ալեքսանդր Մյասնիկյանը

18 Հողատիրության ինչպիսի՞ ձև էր «Գանձագինը».

1) առուվաճառքի ենթակա մասնավոր հողատիրություն
2) եկեղեցապատկան-վանքապատկան հողատիրություն
3) ժառանգական մասնավոր հողատիրություն
4) պայմանական հողատիրություն

19 Կասրե-Շիրինում կնքված պայմանագրի հետևանքով՝

1) Հայաստանը կրկին վերաբաժանվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև:
2) Հայաստանն ամբողջությամբ ընկավ Սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ:
3) Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև:
4) Հայաստանն ամբողջությամբ ընկավ Օսմանյան կայսրության տիրապետության տակ:

20 Հնչակյան կուսակցությունը ԽՍՀՄ տարածքում ե՞րբ դադարեցրեց իր գործու-նեությունը.

1) 1924 թ.
2) 1921 թ.
3) 1922 թ.
4) 1923 թ.

21 Ինչո՞ւ կնքվեց Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագիրը.

1) քանի որ Պարսկաստանի դաշնակից Հայաստանը հանդես եկավ միջնորդությամբ
2) Հռոմի դաշնակից Հայաստանը նրան ստիպեց գնալ զիջումների
3) քանի որ պարտված հռոմեացիները չցանկացան շարունակել պատերազմը
4) քանի որ պարտված Պարսկաստանը հաշտություն էր խնդրել

22 Ե՞րբ են հայ ազատամարտիկներն ազատագրել Բերձորը.

1) 1992 թ. հունսի 2-ին
2) 1992 թ. մայիսի 18-ին
3) 1992 թ. փետրվարի 25-26-ը
4) 1992 թ. մայիսի 4-6-ը

23 Ե՞րբ է ԼՂ Ազգային խորհրդի անդամների և Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունել «Հայկական ԽՍՀ–ի և ԼՂ վերամիավորման մասին» որոշումը.
1) 1990 թ. մայիսի 20–ին
2) 1989 թ. դեկտեմբերի 1–ին
3) 1991 թ. սեպտեմբերի 21–ին
4) 1988 թ. դեկտեմբերի 1–ին

24 Ե՞րբ է Տրդատ I–ը կառուցել Գառնիի ամրոցը.

1) 86 թ.
2) 72 թ.
3) 75 թ.
4) 76 թ.

25 Բարձրությամբ ՀՀ-ի երկրորդ գագաթն է.

1) Սիփանը
2) Նեմրութը
3) Արագածը
4) Կապուտջուղը

26 Կատարել համապատասխանեցում.

ա. Կապադովկիա ներխուժած հռոմեական զորքի հրամանատարը
բ. Անկախ Ծոփքի վերջին արքան
գ. Տիգրան Մեծին հավատարմության երդում տված Մարաստանի թագավորը
դ. Տիգրան Մեծի կողմից մահապատժի ենթարկված Սելևկյան թագուհի

1) Սելենե
2) Սուլլա
3) Գոդերձ II
4) Միհրդատ
5) Արտանես

1) ա–2, բ– 5, գ–4, դ–1
2) ա–5, բ–4, գ–2, դ–1
3) ա–5, բ–4, գ–3, դ–2
4) ա–5, բ–4, գ–3, դ–1

27 Թվարկվածներից ո՞վ հայագետ չէ.

1) Գ. Ղափանցյանը
2) Լ. Օրբելին
3) Մ. Աբեղյանը
4) Հ. Աճառյանը

28 Ո՞րն էր Անին բյուզանդացիներին հանձնելու պատճառը.

1) Բնակչությունը չհամախմբվեց սպարապետի շուրջը և չցանկացավ կռվել ոսոխի դեմ:
2) Պետրոս Գետադարձ կաթողիկոսը համաձայնեց բյուզանդացիների՝ քաղկեդոնականություն ընդունելու առաջարկի հետ և միացավ թշնամուն:
3) Արքունիքում մեծացել էր բյուզանդասերների թիվը, թուլացել էր բնակչության դիմադրական կորովը:
4) Հայ իշխանները միացան բյուզանդական բանակին և սատարեցին թշնամիներին:

29 Կատարել համապատասխանեցում.

1) Արաբո	ա. Հովսեփ Արղության
2) Աղբյուր Սերոբ	բ. Մխիթար Սեֆերյան
3) Հրայր Դժոխք	գ. Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան
4) Վարդան	դ. Նազարեթ Նորաշխարհյան
5) Իշխան	ե. Գրիգոր Մոսեյան
6) Նիկոլ Դուման	զ. Արմենակ Ղազարյան
7) Գրգո	է. Կարապետ Թուր-Սարգսյան
8) Գարուն Աղասի	ը. Սերոբ Վարդանյան
9) Մխո Շահեն	թ. Առաքել Մխիթարյան
	ժ. Սարգիս Մեհրաբյան

1) 1-ժ, 2-ա, 3-ը, 4-դ, 5-թ, 6-բ, 7-զ, 8-է, 9-գ
2) 1-թ, 2-ը, 3-զ, 4-ժ, 5-դ, 6-ա, 7-գ, 8-է, 9-ե
3) 1-բ, 2-դ, 3-զ, 4-ը, 5-ժ, 6-ա, 7-գ, 8-ե, 9-է
4) 1-թ, 2-ը, 3-զ, 4-ժ, 5-ա, 6-գ, 7-ե, 8-է, 9-բ

30 Ո՞ր իրադարձության հետ կապված է ասվել հետևյալ տեսակետը.
«Նրանք հայ ժողովրդին կոչ էին անում հրաժարվելու ոչ միայն Մեծ Հայաստանի ...այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողատարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից: Հայաստանին... այլ ելք չի մնում, քան հաշտվել դրա հետ և համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել և՛ իր երբեմնի հողատարածքները, և՛ իր ժողովրդի այնտեղ մնացած հատվածները»:

1) ԽՍՀՄ–ի կազմավորման
2) ռուս–թուրքական երկրորդ կոնֆերանսի
3) Բաթումի պայմանագրի կնքման
4) Սևրի պայմանագրի կնքման

31 Ե՞րբ է ԱՄՆ–ի կառավարությունն իր բողոքը հայտնել հայերի նկատմամբ իրագործվող բռնությունների դեմ.
1) 1915 թ. հունիսին
2) 1916 թ. մայիսին
3) 1915 թ. ապրիլին
4) 1916 թ. փետրվարին

32 Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի՝ այսօր հայտնի հնագույն պետությունը.

1) Միտաննի
2) Ուրարտու
3) Էթիունի
4) Արատտա

33 Ո՞րն է Բուն Հայոց թվականի սկիզբը.

1) Ք. ա. 552 թ.
2) Ք. ա. 331 թ.
3) Ք. հ. 1 թ.
4) Ք. ա. 2492 թ.

34 Արքաների անունները համապատասխանեցնել իրենց արքայատոհմերին.

1) Խոսրով Կոտակ	ա. Երվանդունի
2) Արտավազդ II	բ. Արշակունի
3) Աշոտ Ողորմած	գ. Հեթումյան
4) Լևոն III	դ. Արտաշիսյան
	ե. Բագրատունի

1) 1–գ, 2–ե, 3–ա, 4–դ
2) 1–բ, 2–դ, 3–ե, 4–գ
3) 1–բ, 2–ա, 3–դ, 4–գ
4) 1–բ, 2–դ, 3–ե, 4–ա

35 Արտաշես I–ի՝ Մեծ Հայքին միացրած տարածքները համապատասխանեցնել ուղղությանը.

1) արևելք	ա. Կարնո երկիր, Եկեղիք, Դերջան
2) հարավ	բ. Գուգարք
3) հյուսիս	գ. Ծոփք, Կոմմագենե
4) արևմուտք	դ. Փայտակարան, Կասպեից երկիր
	ե. Տմորիք

1) 1–ա, 2–ե, 3–բ, 4–դ
2) 1–դ, 2–ե, 3–բ, 4–ա
3) 1–դ, 2–բ, 3–ե, 4–գ
4) 1–գ, 2–բ, 3–ե, 4–դ

36 Կատարել համապատասխանեցում.

Ղեկավար	Ինքնապաշտպանության վայր
1) Արմենակ Եկարյան	ա. Մուսա լեռ (Սուետիա)
2) Հայկակ Կոսոյան	բ. Շատախ
3) Հակոբ Կոտոյան	գ. Վան՝ Քաղաքամեջ
4) Ղուկաս Տեռվլեթյան	դ. Ուրֆա
5) Տիգրան Անդրեասյան	ե. Շապին Կարահիսար
6) Մկրտիչ Յոթնեղբայրյան	զ. Վան՝ Այգեստան
	է. Մուշ

1) 1–զ, 2–գ, 3–է, 4–ե, 5–ա, 6–դ
2) 1–գ, 2–ա, 3–է, 4–զ, 5–բ, 6–դ
3) 1–գ, 2–զ, 3–բ, 4–ե, 5–ա, 6–դ
4) 1–դ, 2–է, 3–գ, 4–ե, 5–ա, 6–բ

37 Պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.

ա. Դավիթ բեկ	1) զ, ե, ա, դ, բ, գ
բ. Հովսեփ Էմին	2) գ, ա, զ, դ, բ, ե
գ. Վ. Բեհբութով	3) զ, ե, ա, բ, դ, գ
դ. Պ. Ցիցիանով	4) ե, բ, դ, զ, ա, գ
ե. Իսրայել Օրի	
զ. մահտեսի Շահմուրատ	

38 Կատարել համապատասխանեցում.

Կազմակերպություն	Գործիչ
1) «Բարենպատակ ընկերություն»	ա. Հակոբ Կալոյան
2) «Միություն ի փրկություն»	բ. Գրիգոր Արծրունի
3) «Պաշտպան հայրենյաց»	գ. Կարապետ Նշկյան
4) «Հայրենասերների միություն»	դ. Ներսես Աբելյան
	ե. Պետրոս Հայկազունի

1) 1–բ, 2–դ, 3–գ, 4–ե
2) 1–ե, 2–ա, 3–գ, 4–դ
3) 1–դ, 2–գ, 3–ա, 4–բ
4) 1–ե, 2–ա, 3–բ, 4–գ

39 Ե՞րբ է տեղի ունեցել Բաշ Ապարանի հերոսամարտը.

1) 1918 թ. մայիսի 25–30–ը
2) 1918 թ. մայիսի 16–27–ը
3) 1918 թ. մայիսի 22–28–ը
4) 1918 թ. մայիսի 23–29–ը

40 Ե՞րբ է ընդունվել Հայաստանի անկախության հռչակագիրը.

1) 1991թ. սեստեմբերի 21-ին
2) 1990թ. օգոստոսի 23-ին
3) 1991թ. սեպտեմբերի 2-ին
4) 1989թ. նոյեմբերի 20-ին

41 Թվարկվածներից ո՞րը Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված զանգվածային հայրենադարձության ընդհատման պատճառներից չէր.

1) ԽՍՀՄ–ի ամբողջատիրական համակարգի նոր բացասական դրսևորումները
2) սառը պատերազմի իրողությունը
3) խորհրդա–թուրքական բարեկամական հարաբերությունների սերտացումը
4) խորհրդային երկրի տնտեսական դժվարությունները

42 1935 թ. հայկական ո՞ր ֆիլմը բարձրացավ էկրան.

1) «Պեպո»
2) «Զարե»
3) «Գիքոր»
4) «Նամուս»

43 Ի՞նչ նպատակով է անգլիական «Արևելահնդկական» ընկերությունը պայմանագիր կնքել հայ վաճառականների հետ.

1) հնդիկ առևտրականներին մրցակցությունից դուրս մղելու
2) Հնդկաստան մուտք գործելը դյուրացնելու և հայ վաճառականության մրցակցությունից խուսափելու
3) Հայոց պետականության վերականգնմանը խանգարելու
4) գերշահույթ ստանալու և գործն ընդլայնելու

44 Պարսից ո՞ր թագավորին են պատկանում հետևյալ խոսքերը.
«Ամեն քրիստոնյա, որ իմ իշխանության տակ է, հայոց հավատին թող հարի»:

1) Հազկերտ III
2) Խոսրով I
3) Խոսրով II
4) Շապուհ II

45 **Կատարել համապատասխանեցում.**

1) Խոսրով III Կոտակ	ա) 338–350 թթ.
2) Պապ	բ) 333–341 թթ.
3) Վրթանես Ա Պարթև	գ) 330–338 թթ.
4) Շապուհ II	դ) 370–374 թթ.
5) Ներսես Ա կաթողիկոս	ե) 309–379 թթ.
6) Արշակ II	զ) 353–373 թթ.
7) Տիրան	է) 350–368 թթ.
	ը) 298–330 թթ.

1) 1–գ, 2–բ, 3–ա, 4–ը, 5–դ, 6–զ, 7–ե
2) 1–է, 2–ա, 3–զ, 4–բ, 5–գ, 6–ը, 7–դ
3) 1–գ, 2–դ, 3–ե, 4–բ, 5–է, 6–զ, 7–ա
4) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ե, 5–զ, 6–է, 7–ա

46 Տրված շարքերից ո՞րն է ներկայացնում միայն ՀՀ վարչապետների.

1) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Վազգեն Սարգսյան, Տիգրան Սարգսյան
2) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Վազգեն Սարգսյան, Խաչատուր Կարճիկյան
3) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Ռաֆֆի Հովհաննիսյան, Սերժ Սարգսյան
4) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Ավետիք Սահակյան, Վահան Փափազյան

47 Քաղաքները դասավորել ըստ դրանց հիմնադրման ժամանակագրական հաջորդականության.

ա. Տիգրանակերտ	զ. Մծուրք
բ. Էրեբունի	է. Երվանդաշատ
գ. Վաղարշապատ	ը. Մենուախինիլի
դ. Արշամաշատ	թ. Զարիշատ
ե. Տուշպա	ժ. Սամոսատ

1) ե, ը, բ, ժ, դ, է, թ, ա, զ, գ
2) ե, բ, ը, ժ, դ, է, ա, թ, զ, գ
3) ե, ը, բ, է, դ, ժ, թ, ա, գ, զ
4) ը, ե, բ, ժ, է, դ, թ, ա, զ, գ

48 Ո՞վ է ժամանակակից երկրաքիմիա գիտաճյուղի հիմնադիրը.

1) Խորեն Սինանյանը
2) Անդրեաս Արծրունին
3) Հակոբ Չամչյանը
4) Հովհաննես Ադամյանը

49 Ե՞րբ է օսմանյան Թուրքիայում արգելվել Հայոց պատմության դասավանդումը հայկական դպրոցներում.

1) 1878 թ.
2) 1880 թ.
3) 1882 թ.
4) 1879 թ.

50 Սյունիքի ազատագրական պայքարի հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Չավնդուրի ճակատամարտը
բ. Զևանշիր քոչվոր ցեղի դեմ տարած հաղթանակը
գ. Տաթև գյուղի մերձակա ամրոցի գրավումը
դ. Զևայի և Որոտանի բերդերի ազատագրումը
ե.Մեղրիի ազատագրումը
զ. Հալիձորի ճակատամարտը

1) բ, գ, ա, դ, ե, զ
2) ե, բ, դ, զ, ա, գ
3) բ, գ, ա, դ, զ, ե
4) գ, ա, զ, դ, բ, ե

51 Ե՞րբ է որոշվել իրագործել Շուշիի ազատագրման գործողությունը.

1) 1992 թ. մայիսի 1-ին
2) 1992 թ. մայիսի 4-ին
3) 1992 թ. մայիսի 8-ին
4) 1993 թ. մայիսի 12-ին

52 Ստորև բերված պնդումներից ո՞րը չի վերաբերում Ա. Թամանյանի գործունեությանը.

1) Նա 1924 թ. կազմեց Երևանի կառուցապատման գլխավոր հատակագիծը:
2) Նրա նախագծով կառուցվեցին կառավարության տունը, օպերայի և բալետի թատրոնը, հանրային գրադարանը, բուհական մի շարք շենքեր:
3) Նրա նախագծով է կառուցվել Երևանի առաջին հէկը:
4) Նա ուսումնասիրել է Անին և գրել համանուն աշխատություն:

53 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Վրաստանի Հանրապետություն
բ. Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետություն
գ. Հայաստանի առաջին հանրապետություն
դ. Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետություն

1) դ, բ, ա, գ
2) բ, գ, ա, դ
3) դ, ա, բ, գ
4) բ, ա, դ, գ

54 Կառուցման տարեթվերը համապատասխանեցնել եկեղեցիների անուններին.

1) Ավանի եկեղեցի	ա. 590-ական թթ.	1) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
2) Մրենի եկեղեցի	բ. 618 թ.	2) 1-ա, 2-ե, 3-բ, 4-գ
3) Հռիփսիմե եկեղեցի	գ. 631 թ.	3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4) Զվարթնոցի եկեղեցի	դ. 641-661 թթ.	4) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ
	ե. 613 թ.	

55 Ո՞ր փաստաթղթից են մեջբերված հետևյալ խոսքերը.

«Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իրրև անկախ պետական միություն»:

1) «Հաշտության և հողի մասին» հրովարտակից
2) «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ»-ից
3) «Թուրքահայաստանի մասին» հրովարտակից
4) Հայոց ազգային խորհրդի՝ Հայաստանի անկախության մասին կոչից

56 Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Մառիի
բ. Սևանի
գ. Արճեշի
դ. Մանազկերտի
ե. Բասենի
զ. Բերդուսի
է. Վարդանակերտի
ը. Արձնիի
թ. Չմանկատուկի
ժ. Դողսի

1) ը, ե, ժ, է, բ, դ, ա, թ, զ, գ
2) է, գ, ը, ժ, բ, ե, դ, զ, թ, ա
3) է, զ, թ, ը, բ, ժ, ե, գ, ա, դ
4) ե, է, ը, ա, ժ, գ, դ, բ, թ, զ

57 Կատարել համապատասխանեցում.

Անուն	*Պաշտոն*
1. Ա. Մանուկյան	ա. կառավարության նախագահ
2. Հ. Հախվերդյան	բ. բանակի հրամանատար
3. Խ. Կարճիկյան	գ. զինվորական նախարար
4. Գ. Պետրոսյան	դ. ֆինանսների նախարար
5. Ա. Խատիսյան	ե. ներքին գործերի նախարար
	զ. արդարադատության նախարար

1) 1-ե, 2-բ, 3-դ, 4-զ, 5-ա
2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-զ, 5-բ
3) 1-զ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-ե
4) 1-ե, 2-գ, 3-դ, 4-զ, 5-ա

58 Ի՞նչ նպատակով են ձևավորվել ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները.

1) Հայ հասարակության հոգևոր կյանքի ղեկավարությունն իրենց ձեռքը վերցնելու
2) Հայ հասարակության մեջ խմորվող օտարամոլությունը վերացնելու
3) Հայ հասարակության մեջ եղած ներքին երկպառակությունները վերացնելու
4) Հայ հասարակության մեջ զինված պայքարի գաղափարախոսությունը տարածելու և գործնականում կիրառելու

59 Զաքարյանների ազատագրած վայրերի անվանումները համապատասխանեցնել դրանց ազատագրման տարեթվերին.

1) Դվին	ա. 1206 թ.
2) Կարս	բ. 1199 թ.
3) Ամբերդ	գ. 1196 թ.
4) Անի	դ. 1203 թ.
	ե. 1209 թ.

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
2) 1-դ, 2-ե, 3-գ, 4-ա
3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ե
4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ

60 Նշված պայմաններից առանձնացնել երկուսը, որոնք տեղ են գտել Տիգրան Մեծի և Պոմպեոսի միջև կնքված հայ-հռոմեական պայմանագրում:

ա. Հայկական պետությունը պահպանում էր իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում:
բ. Հօգուտ Հռոմեական Հանրապետության՝ Մեծ Հայքը հրաժարվում էր Ասորիքից, Պաղեստինից, Փյունիկիայից և Կիլիկիայից:
գ. Հօգուտ Հռոմեական Հանրապետության՝ Մեծ Հայքը հրաժարվում էր Ադիաբենեից, Միգդոնիայից և Օսրոյենեից:
դ. Հօգուտ Պարթևստանի՝ Մեծ Հայքը հրաժարվում էր Մարաստանից, Ատրպատականից, Ադիաբենեից, Միգդոնիայից և Օսրոյենեից:
ե. Մեծ Հայքը Հռոմին պետք է վճարեր 60 հազար տաղանդ ռազմատուգանք և տարեկան 6 հազար տաղանդ հարկ, սակայն դրանք վճարվելու էին Ծոփքի արքայական գանձարաններից:

1) ա, գ 2) դ, ե 3) ա, բ 4) ա, ե

61 Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

ա. Արևմտահայության կյանքը կազմակերպող օրենսդիր մարմինը կոչվում էր նաև երեսփոխանական ժողով:
բ. Օսմանյան կայսրությունում գտնվող Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև ծագած վեճը հայտնի է «Արևելյան հարց» անունով:
գ. 1846 թ. ստեղծված և Երևան, Նոր Բայազետ, Նախիջևան, Ալեքսանդրապոլ ու Օրդուբադ գավառներն ընդգրկող վարչական միավորը Երևանի նահանգն էր:
դ. Անդրկովկասում Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով-Դաշկովի պաշտոնն էր Կովկասի փոխարքա:
ե. Պատգամավորական Կենտրոնական ժողովը Հայաստանում ապրող հայերի ներկայացուցչական համագումարն էր:
զ. Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դիրք ուներ երիտթուրքերի «Միու-թյուն և փրկություն» կոչվող կազմակերպությունը:
է. Արևմտահայ զորաբաժնի ստեղծման նպատակով կյանքի կոչված գործադիր նոր մարմինը կոչվում էր Հայաստանի ապահովության խորհուրդ:

ը. Հայկական կորպուս կոչվում էր այն զորամիավորումը, որը ձևավորվել էր 1918 թ. մարտի 1-ին Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ:
1) ա, բ, գ, է
2) բ, գ, ե, զ
3) ա, դ, է
4) դ, է, ը

62 Թվարկվածներից որո՞նք են պատմական դեպքերի և իրադարձությունների իրական արդյունքներ.
ա. Լոզանի կոնֆերանսից հետո Հայկական հարցը փոխարինվեց դեպի հայրենիք ներգաղթ կազմակերպելու հարցով:
բ. «Ազգային օջախի» ստեղծումը Լոզանի կոնֆերանսի որոշումների հետևանքն էր:
գ. «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի դրույթների կեն-սագործման արդյունքում երկրի տնտեսության հիմքում դրվեցին մասնավոր սե-փականատիրական և շուկայական տնտեսության սկզբունքները:
դ. 1999 թ. մայիսի 30-ի խորհրդարանական ընտրությունների հետևանքը Հայաստանում իշխանափոխությունն էր:
ե. Ադրբեջանի անկախության հռչակագրով Ադրբեջանն ընդգրկված էր լինելու 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի հանրապետության սահմաննե-րում:
զ. 1994 թ. մայիսին հրադադարի հաստատումը զուտ հայկական իշխանությունն-ե-րի նախաձեռնության արդյունք էր:
է. ՀՀ ընդդիմադիր ուժերի միավորման հետևանքով 2008 թ. օգոստոսին ձևավոր-վեց ՀԱԿ-ը:
1) ա, գ, ե
2) գ, ե, է
3) դ, ե, է
4) բ, դ, զ

63 Տրված պնդումներից որո՞նք են սխալ.
ա. Սևանի հարավարևմտյան մասում իշխող Մելիք-Շահնազարյանները Նադիր շահի օրոք ավելի են ամրապնդել իրենց դիրքերը:
բ. 1724 թ. Արցախի ազատագրական ուժերը թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի պայմանագիր են կնքել Գանձակի մահմեդականների հետ:
գ. Մովսես Սարաֆյանի ծրագրի համաձայն Հայաստանի կառավարությունը Պետերբուրգում պետք է ունենար իր դեսպանը:
դ. «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը խորհրդարանական հանրապետություն ստեղծելու ծրագիր էր:
ե. 1701 թ. մինչև իր կյանքի վերջը Արցախում եռանդուն գործունեություն է ծավալել Եսայի Հասան Ջալալյանը:
զ. Ըստ Շ. Շահամիրյանի առաջարկած Հայաստանի ազատագրության նախագծի՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:
է. Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը 1679թ. բանակցություններ է սկսում Ռեչ Պոսպոլիտայի թագավոր Յան Սոբեսկու հետ:
1) ա, գ, դ
2) բ, դ, է
3) ա, գ, ե
4) բ, դ, զ

64 Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություն–ներից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը.

ա. թյուրք–սելջուկների առաջին արշավանքը Հայաստան
բ. Անիի հռչակումը մայրաքաղաք
գ. Սմբատաբերդ լեռան մոտ հայ բնակչության կոտորածը
դ. Տաշիր–Զորագետի թագավորության հիմնադրումը
ե. թյուրք–սելջուկների երրորդ արշավանքը Հայաստան
զ. Սյունիքի թագավորության հռչակումը
է. Վարդանակերտի ճակատամարտը
ը. Դավիթ Կյուրապաղատի մահը
թ. Մանազկերտի ճակատամարտը
ժ. Անիի գրավումը թյուրք–սելջուկների կողմից

1) ա 2) զ 3) գ 4) թ

65 Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. ԼՂՀ ինքնապաշտպանական ընդհատակյա կոմիտեի ստեղծումը
բ. ԼՂՀ պետական դրոշի հաստատումը
գ. ԼՂՀ անկախության հռչակագրի ընդունումը
դ. Արցախյան պատերազմի ավարտը, զինադադարի հաստատումը
ե. ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի ստեղծումը
զ. ղարաբաղա–ադրբեջանական պատերազմի սկիզբը
է. «Հարսանիք լեռներում» գործողության սկիզբը
ը. ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը
1) զ, գ, է, ա, ե, ը, դ, բ
2) գ, զ, ը, է, ե, ա, բ, դ
3) գ, է, զ, ա, ե, բ, ը, դ
4) զ, ա, գ, ե, է, բ, ը, դ

66 Աշխատության վերնագիրը համապատասխանեցնել հեղինակի անվանը.

1) Մատթեոս Ուռհայեցի	ա. «Հայոց պատմություն»
2) Ստեփանոս Օրբելյան	բ. «Տարեգիրք»
3) Վարդան Արևելցի	գ. «Պատմութիւն»
4) Արիստակես Լաստիվերցի	դ. «Ժամանակագրություն»
5) Թովմա Արծրունի	ե. «Պատմութիւն նահանգին Սիսական»
6) Կիրակոս Գանձակեցի	զ. «Արծրունիների տան պատմություն»
	է. «Տիեզերական պատմություն»

1) 1–ե, 2–բ, 3–է, 4–գ, 5–զ, 6–ա
2) 1–դ, 2–ե, 3–է, 4–գ, 5–զ, 6–ա
3) 1–է, 2–ե, 3–դ, 4–զ, 5–ա, 6–բ
4) 1–դ, 2–ե, 3–գ, 4–ա, 5–զ, 6–բ

67 Կատարել համապատասխանեցում.

Քաղաք	**Հիմնադիր արքա**	
1) Մծուրք	ա. Վաղարշ II	1) 1–գ, 2–ե, 3–բ, 4–ա
2) Վաղարշապատ	բ. Տիգրան II	2) 1–գ, 2–ե, 3–դ, 4–բ
3) Բագարան	գ. Սանատրուկ II	3) 1–գ, 2–ա, 3–դ, 4–բ
4) Տիգրանակերտ	դ. Երվանդ IV	4) 1–ա, 2–ե, 3–դ, 4–բ
	ե. Վաղարշ I	

68 Թվարկվածներից որո՞նք են 1950-1960-ական թթ. հայագիտության զարգացման արդյունքներ.

ա. «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի հրատարակման սկիզբը
բ. «Հրազդան», «Նաիրի» և այլ էլեկտրոնային հաշվիչ բարդ մեքենաների նախագծումը
գ. «Հայ նոր գրականության պատմության» երեք հատորների հրատարակումը
դ. ուրարտական և հելլենիստական շրջանի հուշարձանների պեղումները
ե. Բյուրականի աստղադիտարանի վերածվելը գիտահետազոտական խոշոր կենտրոնի
զ. «Երկունք» և «Նահապետ» պատմական կինոնկարների ստեղծումը

1) բ, գ, զ 2) գ, դ, ե 3) ա, բ, դ 4) ա, գ, դ

69 Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

ա. Երբ Սմբատ Բագրատունու 2000–անոց այրուձին գտնվում էր Արձնի գյուղի մոտ, արաբական 5000–անոց պատժիչ ջոկատը հասավ նրանց:
բ. Վարդանակերտի մոտ արաբները չկարողացան դիմադրել և սկսեցին խուճապահար անցնել Արածանին:
գ. Ռշտունիք գավառի Ակոռի գյուղի մոտ ապստամբները Վասպուրականի Սմբատ իշխանի գլխավորությամբ ջախջախում են թշնամուն, միայն 280 արաբ զինվոր փախչում է ու թաքնվում եկեղեցում:
դ. Արաբների տիրապետության ժամանակ հայ հոգևորականությունը հարկատու չէր:
ե. Վարդանակերտի մոտ պարտված արաբները փախուստի դիմեցին, Երասխի սառույցը ջարդվեց, և նրանցից շատերը խեղդվեցին, միայն 300 հոգու մեծահոգաբար պատսպարել ու բուժել է Կամսարական իշխանուհի Շուշանը:
զ. VIII դ. սկզբի հակաարաբական ապստամբությունն ընդգրկել էր Երևանը, Վանանդը, Վասպուրականը: է. Հերթ ոստիկանի աշխարհագրով հարկահանությունը խիստ ծանրացավ:
1) բ, գ, է
2) ա, ե, զ
3) բ, գ, դ
4) ե, զ, է

70 Ընտրել երեք սխալ պնդումները

ա. Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Բուն Հայոց թվականի սկիզբը:
բ. Հայաստանի չափազանց բարենպաստ պայմաններն ու աշխարհաքաղաքական դիրքը անցյալում և նորագույն շրջանում առաջացրել են տարբեր պետությունների, ժողովուրդների և քոչվոր ցեղերի հետաքրքրությունը:
գ. Հայասան առաջին անգամ հիշատակվում է Ք. ա. XVI դ. խեթական մի արքայի արշավանքների կապակցությամբ, որոնց ժամանակ նրա դեմ դուրս է գալիս այդ երկրի թագավոր Խուկանան:
դ. Խեթական աղբյուրների համաձայն՝ Հայասա թագավորությունն ունեցել է արքունիք, բանակ, արքունի դիվան՝ իր դպիրներով, ինչպես նաև դիցարան:
ե. «Նաիրի» անվամբ իրենց երկիրը կոչել են նաև Վանի թագավորության տիրակալներն ասուրերենով գրված արձանագրություններում:
զ. Հայերի օգտագործած արեգակնային օրացույցի հիմքով տոմարական համակարգերից առավել նշանավոր են Հայոց մեծ թվականը, Հայոց միջին թվականը և Հայոց փոքր թվականը:
է. Ըստ Մովսես Խորենացու՝ Տիգրան Մեծը, ի թիվս բազում այլ բարեփոխում- ների, բարեկարգել ու ճշգրտել է օրացույցը:
ը. Ասուրա–բաբելական աղբյուրներում Հայաստանն «Ուրարտու» անվամբ հիշատակվում է մինչև Ք. ա. IV դարի առաջին կեսը:

1) գ, զ, է 2) դ, ե, ը 3) բ, զ, է 4) ա, գ, ը

71 Կատարել համապատասխանեցում.

Պաշտոն

1) Փարիզի խորհրդաժողովում ՀՀ պատվիրակության ղեկավար
2) III կամավորական ջոկատի հրամանատար
3) Շապին–Գարահիսարի Զինվորական խորհրդի ղեկավար
4) Արևմտահայ Ազգային խորհրդի նախագահ
5) Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար
6) Հայաստանի առաջին կառավարության արտաքին գործերի նախարար
7) Հաճընի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար

Գործիչ

ա. Ալեքսանդր Խատիսյան
բ. Ստեփան Շահումյան
գ. Սարգիս Ճեպեճյան
դ. Վահան Փափազյան
ե. Ավետիս Ահարոնյան
զ. Համազասպ
է. Ղուկաս Տեռվլեթյան
ը. Հովհաննես Քաջազնունի

1) 1–բ, 2–գ, 3–զ, 4–ա, 5–դ, 6–ը, 7–է
2) 1–ե, 2–զ, 3–է, 4–դ, 5–բ, 6–ա, 7–գ
3) 1–ե, 2–գ, 3–դ, 4–ա, 5–զ, 6–ը, 7–է
4) 1–ա, 2–է, 3–գ, 4–ե, 5–բ, 6–դ, 7–զ

72 Բերված փաստերից ընտրել երեքը, որոնք տեղ են գտել «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքում.

ա. Ներկայացված է ապագա պետության կառավարման համար նախատեսված օրենքների հավաքածու:
բ. Ներկայացված է խորհրդարանական հանրապետություն ստեղծելու ծրագիր:
գ. Ներկայացված է ապագա պետության բարձրագույն գործադիր իշխանության կառուցվածքը:
դ. Ներկայացված են հայ ժողովրդի հերոսական անցյալը, նրա աշխարհագրական լայնարձակ սահմանները:
ե. Ներկայացված է ապագա պետության բարձրագույն օրենսդիր իշխանության կառուցվածքը:
զ. Գիրքը կոչ է անում հայ երիտասարդներին դուրս գալու օտար բռնակալների դեմ և զենքի ուժով հասնելու ազատության:
է. Քննադատվում է միապետական կարգը՝ այն համարելով հայոց պետականության անկման պատճառներից մեկը:

1) բ, զ, է
2) ա, ե, զ
3) գ, դ, ե
4) դ, զ, է

73 Տրվածներից առանձնացնել երեք կետ, որոնք Շահամիր Շահամիրյանի կազմած հայկական պետականության վերականգնման նախագծի հոդվածներից չեն.

ա. Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը հռչակել հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:
բ. Հայաստանում 20 տարի ժամանակով տեղակայել 6–հազարանոց ռուսական զորք:
գ. Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան:
դ. Հայաստանի և Ռուսաստանի միջև սահմանել ազատ երթևեկություն:
ե. Հայոց թագավորին ընտրել ռուսական կայսրի կողմից, իսկ այնուհետև օծել Էջմիածնում:
զ. Պետերբուրգում ունենալ Հայաստանի կառավարության դեսպան:

է. Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին:
1) գ, դ, զ
2) գ, ե, է
3) ա, գ, է
4) բ, ե, զ

74 Թվարկվածներից որո՞նք են Գագիկ I Բագրատունու գործունեության հետևանքներից.
ա. Անիի թագավորությանը միացվեցին Դվինի և Ատրպատականի ամիրայու-թյունները:
բ. Հայկական զորքը նրա օրոք դարձավ հզոր ուժ, և հետևողականորեն ընդարձակվեցին պետության սահմանները:
գ. Ճնշվեց Տայքի Դավիթ Կյուրապաղատի անհնազանդությունը:
դ. Կառուցվեց Անիի երկրորդ պարիսպների գիծը:
ե. Բագրատունյաց թագավորությունը հասավ իր հզորության ու ծաղկման գագաթնակետին:
զ. Գագիկ I–ի կինը՝ Կատրամիդե թագուհին, Զորագետի հովտում հիմնեց Սանահինի և Հաղպատի վանքերը:
է. Հայկական տարածքների մեծ մասը փաստորեն միավորվեց Բագրատունիների կենտրոնական թագավորության գերիշխանության ներքո:
1) բ, գ, է
2) բ, ե, է
3) ա, գ, դ
4) գ, ե, զ

75 Թվարկվածներից որո՞նք են Հայաստանում ՆԷՊ-ի կենսագործման արդյունքներ.

ա. դասակարգային պայքարի վերացումը երկրում
բ. գյուղատնտեսության վերականգնումը
գ. ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնության վերացումը
դ.արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկի՝ պղնձարդյունաբերության վերականգնումը
ե. տնտեսության արդյունաբերացումը
զ. տնտեսության հասնելը զարգացման նախապատերազմյան՝ 1939 թ. մակարդակին
է. բնակչության կենսամակարդակի բարելավումը

1) բ, դ, է
2) բ, դ, ե
3) ա, գ, զ
4) դ, զ, է

76 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. Զանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհուրդ
2. Ղարաբաղի ժողովրդական կառավարություն
3. Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ
4. Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտե
5. «Լոռու չեզոք գոտի»

ա. Թիֆլիսի կոնֆերանսի որոշմամբ ստեղծված վարչական միավոր, ուր սահմանվել էր հատուկ կառավարում՝ հայ և վրացի ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիացի գեներալ–նահանգապետի ընդհանուր վերահսկողությամբ
բ. արցախահայության I համագումարում ստեղծված երկրամասի իշխանության մարմին
գ. Զանգեզուրի ազգային խորհրդի հիմքի վրա վերակազմված և Հայաստանի Հանրա-պետության անունից գործող մարմին

դ. ԼՂԻՄ–ի լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրված մարմին, որը գլխա-վորեց արցախցիների ազատագրական պայքարը
ե. Լոռու և Ախալքալաքի գավառներից ստեղծված վարչական միավոր, որը գտնվում էր անգլիացիների վերահսկողության ներքո
զ. ԽՍՀՄ ԳԽ նախագահության կողմից Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին

1) 1–գ, 2–բ, 3–դ, 4–զ, 5–ա
2) 1–զ, 2–գ, 3–բ, 4–դ, 5–ե
3) 1–ե , 2–բ, 3–դ, 4–զ, 5–ա
4) 1–գ, 2–բ, 3–զ, 4–դ, 5–ե

77 Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

1) Հայաստանի միավորված ազգային կուսակցությունների կենտրոնական ղեկավար մարմինը հայտնի դարձավ Ամերկոմ անունով:
2) Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարում երկրամասը կառավարելու համար կազմված մարմինը կոչվում էր Ղարաբաղի ժողովրդական կառավարություն:
3) Խորհրդարանի 1918 թ. սեպտեմբերին ընդունած օրենքը կոչվում էր «Դպրոցի կատարելագործման մասին»:
4) Հայաստանի առաջին հանրապետությունում համայնքային ինքնավարությունները կոչվել են զեմլյաներ:
5) Սոցիալ–դեմոկրատներին կարճ անվանում էին էսէռներ:
6) Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունված օրենքով ստեղծված արդարադատության մարմին էր երդվյալ ատենակալների դատարանը:
7) ՌԿ(բ)Կ ԿԿ քաղբյուրոյի կողմից ստեղծված մարմինը կոչվում էր «Քարոզչության և գործողության խորհուրդ»:
8) Զանգեզուրի հայկական ազգային խորհուրդը 1919 թ. սկզբին վերակազմվեց և կոչվեց Զանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհուրդ:

1) 2,6,8
2) 2,4.8
3) 4,6,7
4) 1,5,6

78 Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.
1) խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցումը ԽՍՀՄ կառավարության կողմից
2) ՄԱԿ–ում Կիպրոսի արտգործնախարար Կիպրիանուի կոչ անելը՝ քննարկելու Հայկական հարցը
3) Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) ստեղծումը
4) Երևանի Լենինի հրապարակի (Հանրապետության հրապարակի) ճարտարապետական համալիրի կառուցման ավարտը
5) գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը
6) «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
7) Հայաստանի անկախության ճանաչումը Թուրքիայի կողմից առանց դիվանագիտական հարաբերությունների հաստատման
8) ԱՊՀ–ի ստեղծումը

1) 3,6 2) 4,5 3) 6,7 4) 2,6

79 Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

ա. 1877 թ. ամռանը թուրքերը, մեծ ուժեր կենտրոնացնելով, պաշարում են Բայազետի բերդը, և ավելի քան 23 հազար հոգուց բաղկացած թուրքական զորքերը կատաղի գրոհներ են գործում բերդի վրա, բայց գրավել չեն կարողանում:
բ. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում՝ Ալեքսանդրապոլ–Կարս ուղղությամբ, հիմնական հարվածող ուժը հայազգի գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի հրամանատարությամբ գործող 52–հազարանոց Կովկասյան կորպուսն էր:
գ. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմում Մ. Լոռիս–Մելիքովի և Ա. Տեր–Ղուկասովի կողքին մարտնչում էին գեներալներ Հովհաննես Լազարևը, Բեհբութ Շելկովնիկովը, Հակոբ Ալխազովը, Լևոն Մելիքովը, Ստեփան Քիշմիշևը և տարաստիճան բազմաթիվ զորահրամանատարներ ու զինվորականներ:
դ. Մկրտիչ Խրիմյանի 1869 թ. պատրիարք դառնալուց հետո «Ազգային սահմանադրությունը» գործարկվեց Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում:
ե. XIX դարի կեսերին Զեյթունն անվանապես էր ենթարկվում Մարաշի փաշայությանը, սակայն միայն իշխանություններին տարեկան որոշ քանակությամբ հարկ էր վճարում:
զ. 1860 թ. մայիսի 24–ին սուլթանի կողմից վավերացված արևմտահայերի «Ազգային սահմանադրությունը» Արևմտյան Հայաստանի ու ամբողջ կայսրության հայ բնակչության կրթամշակութային կյանքը կարգավորող իրավական կարևոր փաստաթուղթ էր:
է. Ըմբոստ Զեյթուն լեռնագավառը իրեն ենթարկելու թուրքական կառավարության ջանքերն ավելի եռանդուն են դարձել, երբ Կովկասից ներգաղթած չերքեզները բնակեցվել են Մարաշի շրջակայքում:
ը. 1860 թ. չերքեզների ավազակային ջոկատների ուղեկցությամբ թուրքական 50–հազարանոց բանակը արշավել է Զեյթունի վրա և ջախջախիչ պարտություն կրել:
թ. 1862 թ. Ազիզ փաշայի կազմակերպած գրոհը Զեյթունի վրա ավարտվել է նրանով, որ թուրքերը, կորցնելով ավելի քան 2000 մարդ և իրենց ունեցած հրանոթները, փախուստի են դիմել:
1) գ, թ, ե
2) բ, դ, է
3) ա, զ, թ
4) ա, զ, ը

80 Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

ա. Հ. Քաջազնունու կառավարությանը փոխարինածը հայտնի է «բյուրո-կառավարություն» անունով:
բ. Այն կազմակերպությունը, որին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»:
գ. Քարվաճառի ազատագրման գործողությունը ստացավ «Հարսանիք լեռներում» անվանումը:
դ. Հայ–ռուսական երևանյան բանակցությունների ավարտին նախաստորագրված փաստաթուղթը կոչվում էր «Եզրափակիչ որոշման արձանագրություն»:
ե. ՀՀ Սահմանադրության նախագծի մշակման նպատակով 1990 թ. նոյեմբերի 15–ին ստեղծված մարմինը ՀՀ Ազգային ժողովի սահմանադրական
հանձնաժողովն էր:
զ. Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերում գոյություն ունեցող տրոցկիստական երկու խմբերն իրենց անվանում էին «Ուղղափառ մարքսիստներ» և «Տրոցկիստական միություն»:
է. Միջազգային պայմանագրերի չեղյալ հայտարարելը կոչվում է դենոնսացիա:

1) ա, գ, ե 2) բ, դ, է 3) բ, դ, ե 4) գ, ե, զ